



Հայաստանի առողջապահության նախարարության և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 3

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Քննաթերթ

Հարցեր 1-25	50 միավոր
Խնդիր 1	15 միավոր
Խնդիր 2	10 միավոր
Խնդիր 3	10 միավոր
Խնդիր 4	15 միավոր
Ընդամենը	100 միավոր

Հուլիս 2026թ.

Բաժին Ա

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. Քաղաքացիական օրենսդրությունը և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերը կարգավորում են.

ա) քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև ծագող պայմանագրային պարտավորությունները, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները.

բ) քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, սեփականության և այլ գույքային իրավունքների ու մտավոր սեփականության նկատմամբ բացառիկ իրավունքների ծագման հիմքերն ու իրականացման կարգը, պայմանագրային և այլ պարտավորությունները, ինչպես նաև այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները.

գ) սեփականության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև աշխատանքային, ընտանեկան և հարկային հարաբերությունները.

դ) ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև ծագող միայն գույքային հարաբերությունները:

2. Համատեղությամբ աշխատանքի դեպքում, եթե բացակայում է կողմերի համաձայնությունը, ո՞րն է համարվում հիմնական աշխատանք.

ա) այն աշխատանքը, որի շրջանակում աշխատողի համար սահմանված է առավել երկար աշխատաժամանակ.

բ) այն աշխատանքը, որը կատարվում է առավել վաղ կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա.

գ) այն աշխատանքը, որը գործատուի անհատական ակտով ճանաչվել է հիմնական աշխատանքը.

դ) ժամանակավոր աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարվող աշխատանքը:

3. Որոշակի ժամկետով պայմանագրեր կնքվում են.

ա) սեզոնային աշխատանք կատարող անձանց հետ.

բ) ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող անձանց հետ.

գ) ընտրովի պաշտոնում աշխատող անձանց հետ՝ ընտրված ժամանակահատվածով.

դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

4. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրով ֆինանսավորում ստանալու նպատակով դրամական պահանջը կարող է լինել զիջման առարկա.

- ա) միայն այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել.
- բ) միայն ապագայում ծագելիք դրամական պահանջը.
- գ) ինչպես այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել, այնպես էլ ապագայում ծագելիք դրամական պահանջը.
- դ) ինչպես այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել, այնպես էլ ապագայում ծագելիք դրամական պահանջը՝ պայմանով, որ այն հաստատված է դատարանի վճռով:

5. Նշվածներից որն է ժամկետային ավանդի տարատեսակ.

- ա) կուտակային կենսաթոշակային ավանդը.
- բ) ցպահանջ ավանդ.
- գ) աշխատանքային ավանդ.
- դ) ապահովագրական ավանդ:

6. Վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները ո՞ւմ սեփականությունն են համարվում.

- ա) բոլոր դեպքերում՝ վարձատուի սեփականությունը.
- բ) վարձակալի սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով.
- գ) վարձակալի սեփականությունը միայն այն դեպքում, երբ դրանք կատարվել են վարձատուի համաձայնությամբ.
- դ) վարձակալի և վարձատուի ընդհանուր սեփականությունը, եթե բարելավումները կատարվել են վարձատուի համաձայնությամբ:

7. Երբ է որոշակի երրորդ անձի անունով ներդրված ավանդի շահառուն ձեռք բերում ավանդատուի իրավունքներ.

- ա) բանկային ավանդի պայմանագիրը կնքելու պահից.
- բ) ավանդի գումարը բանկ մուտք լինելու պահից.
- գ) բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին պահանջը ներկայացնելու կամ դրանցից օգտվելու մտադրության մասին այլ եղանակով տեղեկացնելու պահից, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ.
- դ) միայն բանկային ավանդի պայմանագրի ժամկետի ավարտից հետո:

8. Ո՞ր գործարքն է համարվում շինծու.

ա) առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը.

բ) մեկ այլ գործարք քողարկելու նպատակով կնքված գործարքը.

գ) օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջներին չհամապատասխանող գործարքը.

դ) էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը:

9. Վարկային պայմանագրի գրավոր ձևը չպահպանվելու դեպքում.

ա) վարկային պայմանագիրը համարվում է վիճահարույց և կարող է անվավեր ճանաչվել միայն դատարանի վճռով.

բ) վարկային պայմանագիրը համարվում է չկնքված, սակայն կողմերը կարող են այն հաստատել բանավոր համաձայնությամբ.

գ) վարկային պայմանագիրը համարվում է անվավեր, նման գործարքը առոչինչ է.

դ) վարկային պայմանագիրը համարվում է անվավեր, եթե այլ բան սահմանված չէ կողմերի համաձայնությամբ:

10. Ինչ ժամկետում պետք է կատարվի այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով:

ա) պարտատիրոջ պահանջը ներկայացնելու օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից.

բ) պարտատիրոջ պահանջը ներկայացնելու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում, եթե այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից.

գ) պարտատիրոջ պահանջը ներկայացնելու պահից անմիջապես հետո, եթե այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից.

դ) պարտատիրոջ պահանջը ներկայացնելու օրվանից հետո՝ երեսնօրյա ժամկետում, եթե այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

11. Ինչ հետևանք է առաջացնում կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրում ապագայում հանձնվելիք անշարժ գույքի գնի մասին պայմանի բացակայությունը.

ա) պայմանագիրը համարվում է չկնքված.

բ) պայմանագիրը համարվում է առոչինչ.

գ) գինը որոշվում է շուկայում համանման անշարժ գույքի համար կիրառվող գնով.

դ) գինը որոշում է դատարանը՝ կողմերից մեկի պահանջով:

12. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար ինչ կարգապահական տույժեր կարող են կիրառվել.

ա) նկատողություն, խիստ նկատողություն և օրենքով նախատեսված համապատասխան հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում.

բ) նախազգուշացում, տուգանք և աշխատավարձի նվազեցում.

գ) նկատողություն, պաշտոնի իջեցում և արձակուրդի օրերի կրճատում.

դ) խիստ նկատողություն, տուգանք և օրենքով նախատեսված համապատասխան հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

13. Երբ կարող է գործատուն լուծել աշխատանքային պայմանագիրը՝ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու հիմքով.

ա) եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկից.

բ) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն իրականացնելու դեպքում.

գ) աշխատողի կողմից այնպիսի արարք կատարելու դեպքում, որի հետևանքով գործատուն կրել է կամ կարող էր կրել նյութական վնաս.

դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

14. Ո՞ր դեպքում է ուժը կորցրած ճանաչվում աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը.

ա) ծանուցման ժամկետը լրանալուց հետո գործատուն նույն օրը չի լուծել աշխատանքային պայմանագիրը.

բ) ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օրից ավելի և գործատուն չի լուծել աշխատանքային պայմանագիրը.

- գ) ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է տասը օրից ավելի և գործատուն չի լուծել աշխատանքային պայմանագիրը.
- դ) ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է երեք օրից ավելի, և գործատուն չի լուծել աշխատանքային պայմանագիրը:

15. Երբ է գործատուն պարտավոր աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ.

- ա) աշխատողի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում.
- բ) աշխատանքային պայմանագրի լուծումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ անկախ վճարման անհնարինության պատճառներից.
- գ) աշխատողի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու հաջորդ օրը.
- դ) աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե օրենսգրքով, օրենքով կամ կողմերի համաձայնությամբ այլ կարգ նախատեսված չէ:

16. Նշված պնդումներից որն է ճիշտ.

- ա) գործատուն վճարում է հանրակրթական, մասնագիտական կամ բարձրագույն կրթության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում սովորող աշխատողին տրամադրված ուսումնական արձակուրդի համար, եթե գործատուն աշխատողին գործուղել է սովորելու՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողի միջին օրական աշխատավարձից ոչ պակաս չափով.
- բ) բոլոր դեպքերում գործատուն վճարում է հանրակրթական, մասնագիտական կամ բարձրագույն կրթության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում սովորող աշխատողին տրամադրված ուսումնական արձակուրդի համար յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողի միջին օրական աշխատավարձից ոչ պակաս չափով.
- գ) գործատուն վճարում է հանրակրթական, մասնագիտական կամ բարձրագույն կրթության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում սովորող աշխատողին տրամադրված ուսումնական արձակուրդի համար, եթե գործատուն աշխատողին գործուղել է սովորելու՝ նվազագույն աշխատավարձից ոչ պակաս չափով.
- դ) բոլոր դեպքերում գործատուն վճարում է հանրակրթական, մասնագիտական կամ բարձրագույն կրթության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում սովորող աշխատողին տրամադրված ուսումնական արձակուրդի համար նվազագույն աշխատավարձից ոչ պակաս չափով:

17. Նշված պնդումներից որն է ճիշտ.

ա) տնտեսական ընկերակցության կամ ընկերության մասնակիցները պարտավոր են ավանդներ ներդնել օրենքով սահմանված հատուկ կարգով, չափերով, եղանակներով և ժամկետներում:

բ) տնտեսական ընկերակցության կամ ընկերության մասնակիցները պարտավոր են ավանդներ ներդնել կանոնադրությամբ նախատեսված կարգով, չափերով, եղանակներով և ժամկետներում:

գ) տնտեսական ընկերակցության կամ ընկերության մասնակիցները պարտավոր են ավանդներ ներդնել կանոնադրությամբ նախատեսված կարգով, իսկ ավանդների չափերը, եղանակները և ժամկետները որոշել իրենց հայեցողությամբ:

դ) տնտեսական ընկերակցության կամ ընկերության մասնակիցները պարտավոր են ավանդներ ներդնել օրենքով սահմանված հատուկ կարգով, իսկ ավանդների չափերը, եղանակը և ժամկետները սահմանված են կանոնադրությամբ:

18. Նշված պնդումներից որն է ճիշտ հավաստիության կանխավարկածի վերաբերյալ:

ա) անձի ներկայացրած տվյալները համարվում են հավաստի, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել, իսկ դրանց իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածների դեպքում անձը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ստուգել դրանք:

բ) անձի ներկայացրած տվյալները համարվում են հավաստի, եթե անձը ներկայացրել է դրանց իսկության վերաբերյալ ապացույցներ:

գ) վարչական մարմինն իրավունք ունի բոլոր դեպքերում անձից պահանջելու ներկայացված տվյալները հաստատող լրացուցիչ փաստաթղթեր:

դ) անձի ներկայացրած տվյալները համարվում են հավաստի, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել, իսկ դրանց իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածների դեպքում վարչական մարմինը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ստուգել դրանք:

19. Եթե իրավաբանական անձ պարտապանն առարկում է վճարային պարտավորության դեմ, որ դեպքում է այն համարվում անվիճելի:

ա) եթե վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, անկախ հաշվանցի հնարավորությունից:

բ) եթե վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը:

գ) եթե պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ

տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի, բացառությամբ՝ պահանջի հաշվանցի.

դ) եթե պահանջը բխում է պայմանագրով սահմանված հարկեր, տուրքեր, այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից՝ անկախ պարտապանի ներկայացրած ապացույցներից:

20. Ինչ հետևանք է առաջանում, եթե նախավճարով ապահովված պայմանագիրը չի կատարվում կողմերից մեկի պատասխանատվությամբ.

ա) անկախ նրանից, թե որ կողմն է պատասխանատու պայմանագիրը չկատարելու համար, նախավճարը վերադարձվում է այն տված կողմին, իսկ վնասները հատուցվում են առանձին.

բ) եթե պատասխանատու է նախավճար տված կողմը, նախավճարը մնում է մյուս կողմին միայն վնասների առկայության դեպքում, իսկ նախավճար ստացած կողմը վերադարձնում է նախավճարը և վճարում դրա կեսի չափով տուժանք.

գ) եթե պատասխանատու է նախավճար տված կողմը, նախավճարը վերադարձվում է նրան՝ վնասների գումարը նվազեցնելուց հետո, իսկ նախավճար ստացած կողմը վերադարձնում է միայն ստացած գումարը.

դ) եթե պատասխանատու է նախավճար տված կողմը, նախավճարը մնում է մյուս կողմին, իսկ եթե պատասխանատու է նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարի կրկնապատիկը:

21. Նշվածներից որը մասնագիտացված դատարան չէ.

ա) վարչական դատարանը.

բ) սնանկության դատարանը.

գ) հակակոռուպցիոն դատարանը.

դ) քրեական դատարանը:

22. Ո՞ր դեպքում գրավառուն իրավունք ունի պահանջել գրավով ապահովված պարտավորության վաղաժամկետ կատարում.

ա) եթե գրավի առարկան կորել է այնպիսի հանգամանքներում, որոնց համար գրավառուն պատասխանատու չէ, իսկ գրավատուն չի օգտվել գրավի առարկան վերականգնելու կամ այն համարժեք գույքով փոխարինելու իրավունքից.

բ) եթե գրավի առարկայի շուկայական արժեքը նվազել է, սակայն շարունակում է բավարար լինել գրավառուի պահանջն ամբողջությամբ ապահովելու համար.

- գ) եթե գրավատուն գրավառուի համաձայնությամբ գրավի առարկան ժամանակավորապես հանձնել է այլ անձի տիրապետմանը.
- դ) եթե գրավի առարկան վսասվել է, սակայն դրա նշանակությունը և ապահովման արժեքը չեն նվազել:

23. Երբ է դադարում երաշխավորությունը, եթե հիմնական պարտավորության կատարման ժամկետը նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշված է պահանջի պահով.

- ա) եթե պարտատերը երաշխավորության պայմանագիրը կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել.
- բ) եթե պարտատերը երաշխավորության պայմանագիրը կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորին գրավոր պահանջ չի ներկայացրել.
- գ) եթե պարտատերը երաշխավորության պայմանագիրը կնքելու օրվանից մեկ տարվա ընթացքում երաշխավորին գրավոր պահանջ չի ներկայացրել.
- դ) եթե պարտատերը երաշխավորության պայմանագիրը կնքելու օրվանից մեկ տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել:

24. Նշված պնդումներից որն է ճիշտ.

- ա) Անձնական սահմանափակ սերվիտուտը կարող է տրամադրվել անժամկետ կամ որոշակի ժամկետով: Իրավաբանական անձին տրամադրվող անձնական սահմանափակ սերվիտուտը չի կարող գերազանցել 10 տարին.
- բ) Անձնական սահմանափակ սերվիտուտը կարող է տրամադրվել անժամկետ կամ որոշակի ժամկետով: Իրավաբանական անձին տրամադրվող անձնական սահմանափակ սերվիտուտը տրամադրվում է նվազագույնը 10 տարով.
- գ) Անձնական սահմանափակ սերվիտուտը կարող է տրամադրվել միայն որոշակի ժամկետով և ֆիզիկական անձանց.
- դ) Անձնական սահմանափակ սերվիտուտը կարող է տրամադրվել անժամկետ կամ որոշակի ժամկետով միայն ֆիզիկական անձանց: Անձնական սահմանափակ սերվիտուտի տրամադրման ժամկետը չի կարող գերազանցել 10 տարին:

25. Նշված պնդումներից որն է ճիշտ հողամասի կառուցապատման իրավունքի վերաբերյալ.

- ա) կառուցապատման ժամկետի ավարտից հետո կառուցապատողի կատարած անբաժանելի բարելավումները հատուցվում են, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, իսկ կառուցված շենքերը կառուցապատողի սեփականությունն են.
- բ) կառուցապատողի կատարած անբաժանելի բարելավումները բոլոր դեպքերում ենթակա են հատուցման, իսկ կառուցված շենքերն ու շինությունները հողամասի

սեփականատիրոջն են անցնում միայն կառուցապատման իրավունքի ժամկետի ավարտից հետո.

գ) կառուցապատման ժամկետի ավարտից հետո կառուցապատողի կատարած անբաժանելի բարելավումները չեն հատուցվում, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ, իսկ կառուցապատման իրավունքով կառուցված կամ ստեղծված շենքերն ու շինությունները հողամասի սեփականատիրոջ սեփականությունն են, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

դ) կառուցապատողի կատարած անբաժանելի բարելավումները չեն հատուցվում միայն պայմանագրով ուղղակիորեն նախատեսված դեպքում, իսկ կառուցված շենքերի և շինությունների նկատմամբ ծագում է կառուցապատողի և հողամասի սեփականատիրոջ ընդհանուր սեփականությունը:

Ընդամենը 50 միավոր

Խնդիր 1 (15 միավոր)

Արմինե Արզումանյանի (այսուհետ նաև՝ **Պատվիրատու**) և «Արարատ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ **Կատարող**) միջև **01.02.2025 թվականին** կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որով Կատարողը պարտավորվել է Պատվիրատուին մատուցել ինտերնետային կապի ծառայություններ, իսկ Պատվիրատուն՝ յուրաքանչյուր ամսվա համար վճարել 80.000 ՀՀ դրամ:

Պայմանագիրը կնքվել է **24 ամիս** ժամկետով: Պայմանագրով նախատեսվել է, որ Պատվիրատուն կարող է հրաժարվել պայմանագրի հետագա կատարումից՝ այդ մասին առնվազն 15 օր առաջ գրավոր ծանուցելով Կատարողին:

Միաժամանակ պայմանագրով սահմանվել է, որ մինչև պայմանագրի 24-ամսյա ժամկետի ավարտը Պատվիրատուի նախաձեռնությամբ պայմանագիրը դադարեցվելու դեպքում Պատվիրատուն պարտավոր է Կատարողին վճարել 600.000 ՀՀ դրամ տուգանք: Ամսական վճարը սահմանված ժամկետում չվճարելու համար նախատեսվել է տույժ՝ չվճարված գումարի 0,01 տոկոսի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

Կատարողը պայմանագրի կնքումից հետո տեղադրել է ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ սարքավորումները և սկսել է ծառայությունների մատուցումը: Պատվիրատուն մինչև **2025 թվականի սեպտեմբեր** ամիսը ներառյալ պայմանագրով սահմանված կարգով ամբողջությամբ վճարել է մատուցված ծառայությունների դիմաց:

10.09.2025 թվականին Պատվիրատուն գրավոր ծանուցել է Կատարողին, որ **01.10.2025 թվականից** հրաժարվում է պայմանագրի հետագա կատարումից: Պատվիրատուն վերադարձրել է Կատարողին պատկանող սարքավորումները, իսկ

Կատարողը **01.10.2025 թվականից** դադարեցրել է ծառայությունների փաստացի մատուցումը:

Այնուհանդերձ, Կատարողը Պատվիրատուից պահանջել է վճարել՝

1. 2025 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար ընդհանուր 240.000 ՀՀ դրամ ծառայությունների վճար,

2. պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար նախատեսված 600.000 ՀՀ դրամ տուգանք,

3. նշված գումարների նկատմամբ պայմանագրով նախատեսված տույժը:

Պատվիրատուն հրաժարվել է պահանջը կատարելուց՝ հայտնելով, որ օրենսդրությամբ իրավունք ունենալով միակողմանի հրաժարվելու ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրից: Կատարողն առարկել է՝ նշելով, որ կողմերն ազատ են որոշելու պայմանագրի պայմանները, իսկ 600.000 ՀՀ դրամ տուգանքը երաշխավորում է պայմանագրի՝ 24 ամիս գործելու վերաբերյալ Պատվիրատուի պարտավորության կատարումը:

Խնդիրը լուծելիս ընդունել, որ պայմանագիրը կնքվել է պատշաճ ձևով, Պատվիրատուի ծանուցումը Կատարողը ստացել է 10.09.2025 թվականին, իսկ 01.10.2025 թվականից հետո ծառայություններ փաստացի չեն մատուցվել: Սպառողների իրավունքների պաշտպանության հատուկ կարգավորումները կիրառման ենթակա չեն:

Հարց 1. Ներկայացրե՞ք ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հասկացությունը, կնքման կարգը և պայմանագրի կատարումից պատվիրատուի միակողմանի հրաժարման կարգն ու իրավական հետևանքները: (5 միավոր)

Հարց 2. Իրավաչափ է արդյոք Պատվիրատուի՝ պայմանագրի հետագա կատարումից հրաժարվելը: Պարտավոր է արդյոք Պատվիրատուն վճարել պայմանագրի դադարեցումից հետո՝ 2025 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար պահանջվող 240.000 ՀՀ դրամը, և ինչպիսի հատուցում կարող էր վճարվել Կատարողին: Հիմնավորե՞ք պատասխանը: (5 միավոր)

Հարց 3. Ներկայացրե՞ք տուժանքի ընդհանուր հասկացությունը և տեսակները: Իրավաչափ է արդյոք պայմանագրի այն պայմանը, որով Պատվիրատուի՝ պայմանագրից միակողմանի հրաժարվելու դեպքում նախատեսվել է 600.000 ՀՀ դրամ տուգանք, ինչպես նաև որ գումարների նկատմամբ կարող է հաշվարկվել պայմանագրով նախատեսված տույժը: Հիմնավորե՞ք պատասխանը: (5 միավոր)

Խնդիր 2 (10 միավոր)

Աննա Մանուկյանի և «Արփի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ **Գործատու կամ Ընկերություն**) միջև 10.03.2018 թվականին կնքվել է անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր, որի համաձայն՝ Աննա Մանուկյանն աշխատանքի է անցել հաշվապահի պաշտոնում: Աննա Մանուկյանն ունեցել է բարձրագույն տնտեսագիտական կրթություն և հաշվապահական ոլորտում ութ տարվա աշխատանքային փորձ:

02.02.2026 թվականին Գործատուի տնօրենը որոշում է ընդունել հաշվապահական հաշվառման գործընթացներն ավտոմատացնելու և Ընկերության կառուցվածքը փոփոխելու մասին: Արդյունքում սահմանված կարգով հաստատվել է Ընկերության նոր հաստիքացուցակը, որով Ընկերությունում առկա հաշվապահի հաստիքը կրճատվել է:

Նույն ժամանակահատվածում Գործատուի մոտ թափուր է եղել ֆինանսական մասնագետի հաստիքը, որի համար պահանջվել են բարձրագույն տնտեսագիտական կրթություն և ֆինանսական կամ հաշվապահական ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ:

05.02.2026 թվականին Գործատուն Աննա Մանուկյանին գրավոր ծանուցել է, որ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ պայմանավորված՝ հաշվապահի հաստիքի կրճատման հետևանքով երկու ամիս հետո նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվելու է: Ֆինանսական մասնագետի թափուր հաստիքը նրան չի առաջարկվել:

Մինչև Աննա Մանուկյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծումն այդ ֆինանսական մասնագետի պաշտոնում Գործատուն աշխատանքի է ընդունել մեկ այլ անձի:

06.04.2026 թվականին Գործատուն հրաման է արձակել Աննա Մանուկյանի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին՝ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և հաստիքների կրճատման հիմքով:

Աննա Մանուկյանն առարկել է աշխատանքային պայմանագրի լուծման դեմ՝ նշելով, որ իր կրթությունը և աշխատանքային փորձը համապատասխանել են ֆինանսական մասնագետի հաստիքի համար սահմանված պահանջներին: Նրա կարծիքով՝ Գործատուն պարտավոր էր մինչև աշխատանքային պայմանագիրը լուծելն իրեն առաջարկել այդ աշխատանքը, քանի որ ինքը համապատասխանել է ֆինանսական մասնագետի հաստիքի համար սահմանված բոլոր պահանջներին, և նրա առողջական վիճակը թույլ է տվել կատարել տվյալ աշխատանքը:

Գործատուն հայտնել է, որ իրավունք ունի ինքնուրույն որոշելու, թե որ անձին ընդունի թափուր պաշտոնում, իսկ Աննա Մանուկյանին աշխատանքային պայմանագրի լուծման մասին նախապես ծանուցելու ժամկետը պահպանվել է:

Խնդիրը լուծելիս ընդունել, որ Գործարարի կառուցվածքային փոփոխությունը և հաշվապահի միակ հասարիքի կրճատումն իրականում տեղի են ունեցել: Աննա Մանուկյանը չի պատկանում այն աշխատողների թվին, որոնց հետ աշխատանքային պայմանագիրը գործարարի նախաձեռնությամբ լուծելն արգելվում է: Ծանուցման ժամկետի, արձակման նպաստի և վերջնահաշվարկի վերաբերյալ օրենսդրական պահանջները պահպանվել են:

Հարց 1. Ներկայացրե՛ք գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերը և դրանց կիրառման ընդհանուր պայմանները: (4 միավոր)

Հարց 2. Գնահատե՛ք՝ արդյոք սույն դեպքում առկա էր աշխատանքի ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական կամ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ կամ արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք: Հիմնավորե՛ք պատասխանը: (3 միավոր)

Հարց 3. Պարտավո՞ր էր արդյոք Գործատուն Աննա Մանուկյանին առաջարկել ֆինանսական մասնագետի թափուր հաստիքը: Ի՞նչ ազդեցություն ունի աշխատողին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու պարտականության չկատարումն Աննա Մանուկյանի հետ աշխատանքային պայմանագրի լուծման իրավաչափության վրա: Հիմնավորե՛ք պատասխանը: (3 միավոր)

Խնդիր 3 (10 միավոր)

Արման Սահակյանը Վահե Մկրտչյանից՝ որպես փոխառություն ստացել է 18.000.000 ՀՀ դրամ, որը պարտավորվել է վերադարձնել մինչև 01.03.2020 թվականը: Սահմանված ժամկետում Արման Սահակյանը պարտավորությունը չի կատարել և չի վերադարձրել փոխառության գումարը:

15.04.2020 թվականին Արման Սահակյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարանը առուվաճառքի պայմանագրի հիման վրա վաճառել է եղբորը՝ Կարեն Սահակյանին: Պայմանագրով բնակարանի վաճառքի գինը սահմանվել է 25.000.000 ՀՀ դրամ: Պայմանագիրը կնքվել է պատշաճ ձևով, իսկ Կարեն Սահակյանի սեփականության իրավունքը ստացել է պետական գրանցում:

Պայմանագրում նշվել է, որ Կարեն Սահակյանը բնակարանի ամբողջ գինը կանխիկ եղանակով վճարել է մինչև պայմանագրի կնքումը:

Պայմանագրի կնքումից հետո Արման Սահակյանը շարունակել է բնակվել բնակարանում, կատարել կոմունալ վճարումները և իր միջոցներով վերանորոգել այն, այդ թվում՝ կատարել է բնակարանի պահպանման համար անհրաժեշտ աշխատանքները և ծախսերը: Բնակարանի բանալիները Կարեն Սահակյանին չեն հանձնվել: Կարեն Սահակյանը բնակարանը չի օգտագործել, դրա պահպանման կամ վերանորոգման որևէ ծախս չի կատարել և սեփականատիրոջ որևէ այլ փաստացի լիազորություն չի իրականացրել:

Վահե Մկրտչյանը, իմանալով Արման Սահակյանի և Կարեն Սահակյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի մասին, պնդել է, որ Արման ու Կարեն Սահակյանները չեն ցանկացել բնակարանի սեփականության իրավունքն իրականում փոխանցել, իսկ առուվաճառքի պայմանագիրը կնքել են Արման Սահակյանի գույքը պարտքի դիմաց հնարավոր բռնագանձումից հեռացնելու նպատակով:

Արման ու Կարեն Սահակյանները հայտնել են, որ առուվաճառքի պայմանագիրն իրական է, սեփականության իրավունքը պետական գրանցում է ստացել, իսկ Արման Սահակյանի՝ բնակարանում շարունակաբար բնակվելը պայմանավորված է եղել եղբայրների բանավոր համաձայնությամբ: Կարեն Սահակյանը հայտնել է նաև, որ Արման Սահակյանի հետ համաձայնություն են ձեռք բերել բնակարանը սեփականության իրավունքով կրկին փոխանցել Արման Սահակյանին՝ հաշվի առնելով, որ հենց վերջինս է կատարում բնակարանի պահպանման համար անհրաժեշտ գործողությունները:

Խնդիրը լուծելիս ընդունել, որ պայմանագրի ձևին և սեփականության իրավունքի պետական գրանցմանը վերաբերող պահանջները պահպանվել են, իսկ կանխիկ եղանակով գումարը տրամադրելու վերաբերյալ ապացույցներ առկա չեն:

Հարց 1. Ներկայացրե՛ք առոչինչ և վիճահարույց (անվավեր) գործարքների տարբերությունները, ինչպես նաև գործարքների անվավերության ընդհանուր իրավական հետևանքները: (4 միավոր)

Հարց 2. Գնահատե՛ք՝ Արման Սահակյանի և Կարեն Սահակյանի միջև կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագրի վավերությունը: Ի՞նչ նշանակություն ունեն գործարքի կնքման նպատակը, գնի վճարումը հաստատող ապացույցների բացակայությունը, սեփականության իրավունքի պետական գրանցումը և բնակարանը նախկին սեփականատիրոջ կողմից շարունակաբար օգտագործելը: Հիմնավորե՛ք պատասխանը: (6 միավոր)

Խնդիր 4 (15 միավոր)

«Թեո Մետալս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և «Սթիլ բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) միջև 15.01.2025 թվականին կնքված վարկային պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը ստացել է 20.000.000 ՀՀ դրամ վարկ՝ տարեկան 12 տոկոս տոկոսադրույքով և մինչև 01.03.2026 թվականը մարման ժամկետով:

Վարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Բանկի հետ կնքել է իրեն սեփականության իրավունքով պատկանող ոչ բնակելի տարածքի գրավի պայմանագիր: Գրավի պայմանագրում նշվել է, որ գրավով ապահովվում են 15.01.2025 թվականի վարկային պայմանագրից բխող Ընկերության պարտավորությունները՝ ներառյալ վարկի հիմնական գումարը, տոկոսները, տուժանքը և գրավի առարկայի իրացման հետ կապված ծախսերը: Գրավի իրավունքը ստացել է պետական գրանցում:

10.07.2025 թվականին Ընկերությունը, Բանկից ստանալով անհրաժեշտ համաձայնությունները և թույլտվությունները, ոչ բնակելի տարածքն առուվաճառքի պայմանագրով վաճառել է «Գամմա» ՍՊԸ-ին: Առուվաճառքի պայմանագրում նշվել է, որ գույքը ծանրաբեռնված է Բանկի գրավի իրավունքով: «Գամմա» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը ստացել է պետական գրանցում:

01.09.2025 թվականին «Գամմա» ՍՊԸ-ն նույն Բանկից ստացել է 8.000.000 ՀՀ դրամ վարկ՝ մինչև 01.04.2027 թվականը մարման ժամկետով: Նշված պարտավորության ապահովման վերաբերյալ գրավի, երաշխավորության կամ պարտավորության կատարման ապահովման այլ պայմանագրեր չեն կնքվել: «Գամմա» ՍՊԸ-ի և Բանկի միջև չի կնքվել նաև համաձայնություն, որով Բանկին իրավունք կվերապահվեր «Գամմա» ՍՊԸ-ին վերադարձման ենթակա կամ Բանկի մոտ առկա դրամական միջոցներն ուղղելու այդ վարկային պարտավորության մարմանը:

Ընկերությունը չի կատարել 15.01.2025 թվականի վարկային պայմանագրից բխող պարտավորությունը:

Գրավադրված ոչ բնակելի տարածքի նկատմամբ բռնագանձում տարածելու պահին Բանկի՝ Ընկերության նկատմամբ գրավով ապահովված պահանջը կազմել է 18.000.000 ՀՀ դրամ:

Գրավադրված գույքի իրացման ծախսերը հանելուց հետո բաշխման ենթակա զուտ գումարը կազմել է 25.000.000 ՀՀ դրամ:

Բանկը 18.000.000 ՀՀ դրամն ուղղել է Ընկերության՝ գրավով ապահովված պարտավորության մարմանը, իսկ մնացած 7.000.000 ՀՀ դրամը չի վերադարձրել «Գամմա» ՍՊԸ-ին և ուղղել է «Գամմա» ՍՊԸ-ի՝ 01.09.2025 թվականի վարկային պայմանագրից բխող պարտավորության մասնակի մարմանը:

«Գամմա» ՍՊԸ-ն առարկել է՝ նշելով, որ ինքը Ընկերության վարկային պայմանագրի կողմ չէ, այդ պարտավորության անձնական պարտապան չի դարձել, իսկ

գույքի իրացումից ստացված մնացած գումարը պետք է վերադարձվի իրեն՝ որպես գրավադրված գույքի սեփականատեր:

Բանկը պնդել է, որ քանի որ «Գամմա» ՍՊԸ-ն ևս իր պարտապանն է, ուստի ինքը իրավունք ուներ գրավադրված գույքի իրացումից ստացված մնացած գումարը չվերադարձնել «Գամմա» ՍՊԸ-ին և ուղղել վերջինիս այլ վարկային պարտավորության մարմանը:

Խնդիրը լուծելիս ընդունել, որ վարկային և գրավի պայմանագրերի ձևին, գրավի իրավունքի պետական գրանցմանը, գույքի օտարմանը և բռնագանձման դատավարական կարգին վերաբերող պահանջները պահպանվել են: Հաշվանցի, բանկային հաշվի անակցեպո գանձման, պահման իրավունքի, պարտավորության վաղաժամկետ կատարման պահանջի և գույքի իրացման ծախսերի հաշվարկի հարցերը քննարկման ենթակա չեն:

Հարց 1. Ներկայացրե՞ք գրավի իրավունքի հասկացությունը, դրա լրացուցիչ՝ ակցեսոր բնույթը, ինչպես նաև գրավով ապահովված պահանջի ծավալը: (5 միավոր)

Հարց 2. Դադարե՞լ է արդյոք Բանկի գրավի իրավունքը գրավադրված ոչ բնակելի տարածքը «Գամմա» ՍՊԸ-ին օտարելու հետևանքով: Ի՞նչ իրավական կարգավիճակ է ձեռք բերել «Գամմա» ՍՊԸ-ն գրավով ծանրաբեռնված գույքը ձեռք բերելու արդյունքում: Կարո՞ղ էր Բանկը բռնագանձում տարածել «Գամմա» ՍՊԸ-ին պատկանող ոչ բնակելի տարածքի վրա՝ «Թեո Մետալս» ՍՊԸ-ի պարտավորությունը չկատարելու հիմքով: (5 միավոր)

Հարց 3. Ի՞նչ հերթականությամբ և ի՞նչ չափով պետք է բաշխվեր գրավադրված գույքի իրացումից ստացված 25.000.000 ՀՀ դրամը: Իրավաչափ էր արդյոք Բանկի կողմից մնացած 7.000.000 ՀՀ դրամը «Գամմա» ՍՊԸ-ի այլ՝ գրավով չապահովված պարտավորության մարմանը ուղղելը: Հիմնավորե՞ք պատասխանը: (5 միավոր)